*իմ ծերութեան օրերում կաղօթեմ առ Աստուած վասն թանկագին կեանց Իրանի Մեծ Վեհապետին։*

**ՄԿՐՏԻՉ** Կաթուղիկոս ամենայն Հայոց.

10 *մարտի* 1905
Ս. *Էջմիածին.*

## *ԷՋՄԻԱԾԻՆ*

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

*Մեր բարձր պաշտպանութիւնը չէ դադարել երբէք դէպի հայերն ու դէպի քրիստոնեաները, որոնք բնակւում են Մեր Կայսրութեան մէջ։ Նոքա միշտ վայելել են և վայելում են ամենամեծ ապահովութիւն։ Ես հաւատացած եմ, որ Ձեր Սրբութիւնը կը շարունակէ տալ նորանց իւր իմաստուն խորհուրդներ։*

**ՄՈՒԶԱՖՖԷՐ-ԷԴԴԻՆ.**

12 *մարտի* 1905
*Թէհրան.*

# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

## Ա.

### ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

*Հայրապետական տնօրէնութիւնք.*

Կոնդակ *յանուն Հոգ. կառավարութեան Կարուց, որով լուծեցաւ պսակն տաճկահպատակ Անդրանկայ Աբաջեանց ընդ կնոջն Վիրգինեայ Օվյեանց վասն անկարողութեան առն, արտօնելով կնոջն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Թ.* 101.

— Յանուն վեհ. Կոնսիստ. Երևանի, ընդ որում վերադարձուցանելով զգործ նորին, վերաբերեալ այգեբաժանութեան Գրիգորի Յարութիւնեան և եկեղեցւոյ Աշաւնատուն գեղջ, պատուիրեցաւ թողուլ անպահանջ և կարճել զգործն։ Թ. 114.

— Յանուն անդամոյ Սինոդի Ս. Էջմիածնի տ. Մատթէոս վարդապետի, որով կարգեցաւ պատգամաւոր ի գնալ ի Դավրէժ և նախագահութեամբ իւրով կատարել ընտրութիւն Առաջնորդի Հայոց Ատրպատականի։ Թ. 125.

— Յանուն բժշկապետ Պետրոսի Ասլանեան, Ատենապետի պատգամաւորական ժողովոյ վիճակին Ատրպատականի, որով տուաւ գիտել զկարգմանէ տ. Մատթէոս վարդապետի։ Թ. 126.

— Յանուն ժամանակաւոր թեմական խորհրդոյ Առաջնորդարանին Դավրիժոյ, որով պատուիրեցաւ հոգալ զընակարանն, զսնունդ և զճանապարհածախս տ. Մատթէոս վարդապետի մինչ ցաւարտումն պարտաւորութեանց նորա։ Թ. 127.

— Յանուն տ. Մեսրոպ վարդապետի Մաքսուտեան, որով պատուիրեցաւ անմիջապէս մեկնիլ ի պաշտօնավայրն իւր՝ իբրև փոխանորդ Ղարադաղի և վանահայր վանուցն Յուժայ։ Թ. 128.

— Յանուն տ. Մաշթոց վարդապետի Փափազեան, որով պատուիրեցաւ անմիջապէս մեկնիլ ի պաշտօնավայրն իւր՝ իբրև փոխանորդ Սալմաստայ։ Թ. 129.

— Յանուն Գեր. Յուսիկ եպիսկոպոսի և տ. Մխիթար վարդապետի, որով հրամայեցաւ գնալ ի Բաքու ի կողմանէ Նորին Սրբութեան ի մխիթարել զարկածեալսն տեղւոյն։ Թ. 133.

— Յանուն յանձնաժողովոյ, որ վասն նպաստելոյ արկածելոց Բաքուայ։ Թ. 134.

— *Ցանուն Հոգաբարձութեան Ներսիսեան Հոգևոր Դպրանոցին Տփխեաց, որով պատուիրեցաւ տալ 200 րուբլի նպաստ պ. Գերճի Գռօշեան։ Թ.* 147.

— *Ցանուն վեհ. կոնսիստ. Վրաստանի և Իմերէթի, ընդ որում յղեցան 10 հատ հազարանոց արժէթուղթք Աբովեան կտակին հանդերձ կտրոնիւք։ Թ.* 148.

— *Ցանուն տ. Եղիշէ վարդապետի Ահարոնեան, որով կարգեցաւ Փոխանորդ վիճակին Նուխւոյ։ Թ.* 153.

— *Ցանուն տ. Մամբրէ վարդապետի, որով կարգեցաւ Փոխանորդ վիճակին Կարուց։ Թ.* 154.

— *Ցանուն Սինոդի Ս. Էջմիածնի, որով տուաւ տեղեկութիւն զկարգմանէ Փոխանորդաց՝ տ. Եղիշէ վարդապետի Ահարոնեան Նուխւոյ, տ. Մամբրէ վարդապետի Կարուց և տ. Կիւրեղ վարդապետի Ալէքսանդրապօլու։ Թ.* 155.

— *Ցանուն տ. Կիւրեղ վարդապետի, որով կարգեցաւ Փոխանորդ Ալէքսանդրապօլու։ Թ.* 157.

— *Ցանուն տ. Եփրեմ վարդապետի, վանահօր ս. Սարգիս ուխտատեղւոյն Տփխեաց, որով կարգեցաւ կառավարիչ կալուածոց չորից վանօրէիցն Վասպուրականի, որ ի Տփխիս։ Թ.* 157.

---

## Բ.

### Հայրապետական շնորհակալիք և օրհնութիւնք.

*Կոնդակ մխիթարական և խրախուսանաց յանուն հայ ժողովրդեան Բագուայ վասն աղետալի կոտորածոյն Թ.* 124.

— *Ցանուն Քաղաքագլխին Տփխիս քաղաքի վասն աշխատանաց նորա և քաղաքային Խորհրդարանի յընթացս խռովութեան ժողովրդեան Բագուայ և խաղաղութեան նորին։ Թ.* 149.

*— Յանուն իշխան Զախարի Դաւիթեան Մելիքովի, պարագլխի ազնուականաց վրաց Տփխեաց. Թ. 150.*

---

Գ.

Հայրապետական պարգեւք.

*Կոնդակ վարդապետական լանջախաչի յանուն Տ. Աբգար ա. քահանայի Տ. Յարութիւնեան միաբանի ս. Աստուածածին եկեղեցւոյ Բագու քաղաքի։ Թ. 94.*

*— Լանջախաչի յանուն Տ. Յովհաննէս քահանայի Նազարեան, միաբանի ս. Աստուածածին եկեղեցւոյ Բագու քաղաքի։ Թ. 95.*

*— Կամիլաւկայի յանուն Տ. Սողոմոն քահանայի Տ. Մարտիրոսեանց Մատրասա գեղջ։ Թ. 103.*

---

## ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

---

*Յունվարի 26-ին Սինոդը մերժեց Հին Նախիջեւանի Հոգեւոր Կառավարութեան քարտուղար Յարութիւն Տէր Գաբրիէլեանի խնդիրը ռոճկի յաւելման մասին՝ մինչեւ նոր շտատ կազմելը։*

*Յունվարի 28-ին Սինոդը հրամայեց Երեւանի Կոնսիստորիային Հայաստանեայց եկեղեցւոյ ծոցն ընդունել Ղուլիջան գիւղի բնակիչ քրդուհի Գիւլիզար Ղադօյեանին եւ մկրտել սահմանեալ կարգաւ։*

*Յունվարի 31-ին Սինոդը լուծեց Ղազախի գաւառի Աղդան գիւղի բնակիչ Առաքել Բաղդասարեանի եւ Սարգղի Խաչինեանցի պսակը եւ իրաւունք տուաւ Առաքելին կրկին ամուսնանալու։*